«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-16-13-93

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
**(2017-2018 թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)**

ք. Իջևան «19» մայիսի 2018թ.

| Հ/Հ | Միջոցառման բնույթը | Խորագիրը/ Թեման | Անցկացման օրը | Համառոտ նկարագրությունը |
|---|---|---|---|---|
| **1.** | Սեմինար | «Ինչպե՞ս և ինչու՞ մասնակցել գիտաժողովների» սեմինարավար՝ ԸՄԲ ամբիոնի դասախոս Ս.Ալավերդյան | 13.02 | Ներկա էին մասնաճյուղի 10 ուսանողներ: Սեմինարավարը ներկայացրեց գիտաժողովների մասնակցության օգտակարությունը, գիտական հետազոտության ընթացքը, մեթոդները, գիտահետազոտական աշխատանքների տեսակները, դրանց կառուցվածքը: Հանգամանորեն ներկայացվեց աղբյուրներից օգտվելու և հղումներ կատարելու կարգը և նշանակությունը: Ներկայացվեց գիտական գրականություն պարունակող հիմնարար կայքերը: |
| **2.** | Գիտ. զեկուցում դասախոսի կողմից | «Գեյլ-Ռայզերի թեորեմը» Զեկուցող՝ ԸՄԲ ամբիոնի դասախոս Մ.Մելիքյան | 14.02 | Ներկա էին բնական գիտությունների ֆակուլտետի դասախոսներ, աշխատակիցներ և 15 ուսանողներ: Ներկայացվեց, թե ինչ են մաժորացիան, գրաֆը, ցանցը, ինցիդենտության մատրիցը և համալուծ հաջորդականությունները: Բերվեցին օրինակներ, ներկայացվեցին Գեյլ-Ռայզերի թեորեմի կիրառությունները գրաֆների տեսությունում: |
| **3.** | Գրական ցերեկույթ | Գիրք նվիրելու օրվան նվիրված միջոցառում *ԵՊՀ ԻՄ գրադարանի, ՈՒԽ-ի, ՀԼԳ ամբիոնի հետ համատեղ* | 19.02 | Ներկա էին Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսները, գրադարանի աշխատակիցները, տարբեր ֆակուլտետների 30 ուսանողներ: Ներկայացվեց գիրք նվիրելու օրվա խորհուրդը, պատմությունը, Հովհ.Թումանյանի գրական ժառանգությունը: Անցկացվեց գրականության վերաբերյալ վիկտորինա, գրադարանի կողմից ներկաներին նվիրվեցին գրքեր: |
| **4.** | Կինոդիտում | "Английский пациент" Գ/Ֆ ՔԿԳ ուսանողների համար | 20.02 | Ներկա էին «Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության» 15 ուսանողներ: Ֆիլմը պատմում է Երկրորդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համաշխարհային պատերազմի ժամանակ մահացու վիրավորված մի անգլիացու մասին, տալիս է նաև մասնագիտական գիտելիքներ, քանի որ հիվանդը պատմում է հետազոտությունների, քարտեզագրության, իր բացահայտումների վերաբերյալ:<br>Ֆիլմի ավարտին տեղի ունեցան ակտիվ քննարկումներ: |
| **5.** | Հանրամատ-չելի զեկուցում | «Ռուսաստանի մշակույթը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին»<br>Զեկուցող՝ Իրինա Սաֆարյան | 21.02 | Ներկա էին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 10 ուսանողներ:<br>Զեկուցողը ներկայացվեց, որ 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբը ռուսական մշակույթը ստացավ «Արծաթե դար» անվանումը: Նոր մշակույթը հիմնվում էր քննադատության վրա:<br>19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի գրականությունն արտահայտել է նախահեղափոխական դարաշրջանի հասարակական-մշակութային կյանքի գաղափարախոսական տարանջատվածությունը, «ճգնաժամային վիճակը»: |
| **6.** | Քննարկում | «Ուսանողական ակտիվության հեռանկարները» բանախոսներ՝ երիտասարդ դասախոսներ<br>***ՈՒԽ-ի հետ համատեղ*** | 22.02 | Ներկա էին տարբեր ֆակուլտետների 20 ուսանողներ և մասնաճյուղի շրջանավարտ աշխատակիցներ:<br>Ներկայացրեցին այն աշխատանքային ունակությունները և հնարավորությունները, որոնք կարող են զարգանալ ակտիվ լինելու դեպքում, հասարակական ակտիվության տեսակները:<br>Բերվեցին մասնաճյուղի ուսանողական կառույցների մի շարք նախկին նախագահների օրինակներ, ովքեր այսօր աշխատում են տարբեր ոլորտներում, և իրենց կարիերայի հարցում մեծ դեր է ունեցել ուսանողական ակտիվությունը: |
| **7.** | Կինոդիտում | “С любовю, Винсент” Գ/Ֆ Վան Գոգի մասին<br>***ՈՒԽ-ի հետ համատեղ*** | 26.02 | Ներկա էին Կիրառական արվեստի ֆակուլտետի 15 ուսանողներ:<br>Ֆիլմը 2017 թ. նկարահանված անիմացիոն, կենսագրական դրամա է նկարիչ Վինսենթ Վան Գոգի և հատկապես նրա մահվան հանգամանքների մասին: Այն առաջին ամբողջությամբ անիմացիոն գեղարվեստական ֆիլմն է: Ֆիլմում օգտագործված 65.000 դրվագները յուղանկարներ են կտավի վրա, դրանք ստեղծվել են 125 նկարիչների կողմից, ովքեր օգտագործել են Վան Գոգի մեթոդները:<br>Ֆիլմի ավարտից հետո տեղի ունեցավ քննարկում: |
| **8.** | Հանրամատ-չելի զեկուցում | «Բարությունը սկսում է մեզանից»<br>Զեկուցողներ՝ Լուիզա Մադաթյան, Սաթենիկ Հարությունյան | 28.02 | Ներկա էին բ.գ.թ., ասիստենտ Ա.Հասանյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի 15 ուսանողներ:<br>Զեկուցումը կառուցված էր հետևյալ հարցադրման շուրջ. «Կա՞ արդյոք, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | բարություն, թե այն միայն միֆ է, որն արդեն անվերադարձ անցել է մոռացության գիրկը»: |
| **9.** | Հանրամատ-չելի զեկուցում | «Հողամասերի օտարում» Զեկուցող՝ Դիանա Ներսիսյան | 06.03 | Ներկա էին Բնական գիտությունների ֆակուլտետի դասախոսներ և 20 ուսանողներ: Զեկուցման մեջ ներկայացվեց հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը, օտարման տեսակները և կարգը: Վերջում ծավալվեց հետաքրքիր քննարկում՝ դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: |
| **10.** | Կինոդիտում | «Գարեգին Նժդեհ» Փաստավավերա-գրական ֆիլմ | 07.03 | Ներկա էին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 10 ուսանողներ: Բոլորը հետաքրքրությամբ դիտեցին ամբողջ ֆիլմը, որից հետո սկսվեց քննարկում Հայաստանում սոցիալիստական կարգերի հաստատման, Ինքնավար Սյունիքի հռչակման, Նժդեհի՝ հարկադրաբար հեռանալու և այլ հարցերի շուրջ: |
| **11.** | Գիտ. զեկուցում դասախոսի կողմից | «Շարժվող օբյեկտի հայտնաբերման մի խնդիր» Զեկուցող՝ ԸՄԲ ամբիոնի դասախոս Ս.Ալավերդյան | 09.03 | Ներկա էին Բնական գիտությունների ֆակուլտետի 25 ուսանողներ: Ս.Ալավերդյանը ներկայացրեց փնտրման խնդրի էությունը, լուծման ալգորիթմը, պրեզենտացիայի միջոցով ցուցադրեց խնդրի լուծման ընթացքը, խոսեց հնարավոր կիրառությունների մասին: |
| **12.** | Կինոդիտում | «Գլադիատոր» գեղարվեստական ֆիլմ | 14.03 | Ներկա էին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 10 ուսանողներ: Ֆիլմում պատմվում է հռոմեական լեգիոնների հրամանատար Մաքսիմուսի և Հռոմում տիրող իրավիճակի մասին: Ներկա ուսանողները մեծ հետաքրքրությամբ դիտեցին ֆիլմը, որից հետո ծավալվեց քննարկում: |
| **13.** | Հանրամատ-չելի զեկուցում | «Ճանաչված հայեր» Զեկուցողներ՝ Միեր Ղալումյան, Արմիդա Բաղիյան, Ռոզա Մելքումյան | 19.03 | Ներկա էին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 10 ուսանողներ: Ներկայացվեցին 19-րդ դարավերջի և 20-րդ դարի հայ գիտնականներն ու նրանց ձեռքբերումները, որոնք փոխեցին աշխարհը: Անդրադարձ կատարվեց նույն ժամանակաշրջանի հայ գրականության նշանավոր ներկայացուցիչներին, արվեստի բնագավառում հայտնի հայերին, երգարվեստին ու թատրոնին: |
| **14.** | Ինտելեկտու-ալ խաղ | Ինտելեկտուալ խաղի մասնաճյուղի առաջնություն՝ 2 փուլով՝<br>1. Անհատական խաղ<br>2. Խաղ ֆակուլտետների հավաքականների միջև | 19.03-04.05 | Մասնաճյուղի 4 ֆակուլտետներում կայացել են անհատական ինտելեկտուալ խաղեր, որոնցում ամենաբարձր միավորներ հավաքած ուսանողներից ձևավորվել են ֆակուլտետների հավաքականներ: Նրանք մրցել են եզրափակիչ խաղում: Հաղթող թիմը ստացել է պատվոգիր, մրցանակ և փոխանցիկ գավաթ, 2-րդ տեղ զբաղեցնողը՝ պատվոգիր և մրցանակ, մյուս մասնակից թիմերը՝ շնորհակալագրեր և խրախուսական մրցանակներ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **15.** | Գրական ցերեկույթ | Պոեզիայի համաշխարհային օրվան նվիրված | 21.03 | Ներկա էին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դասախոսներ և մասնաճյուղի 20 ուսանողներ:<br>Միջոցառման ընթացքում ներկաներն արտասանեցին հայ և օտարազգի մեծանուն պոետների բանաստեղծական գոհարներից, նաև հեղինակային բանաստեղծություն: |
| **16.** | Սեմինար | «Ամենաադյունավետ մարդկանց 7 սովորույթները» սեմինարավարներ՝ ք.գ.թ., ասիստ. Մ.Հովսեփյան, դաս. Ս.Ալավերդյան | 22.03 | Ներկա էին մասնաճյուղի աշխատակիցներ, դասախոսներ և 40 ուսանողներ:<br>Ներկայացվեց Սթիվեն Ռ. Քովիի մոտիվացոն բնույթի բեսթսելլերը, որը վերջերս է թարգմանվել հայերեն: Թվարկվեցին 7 սովորույթները, բերվեցին օրինակներ, սեմինարավարները պատասխանեցին ներկաների հարցերին: |
| **17.** | Ինտելեկտու-ալ խաղ | Տնտեսագիտական ինտելեկտուալ խաղ | 23.03 | Խաղին մասնակցում էին 3 հոգուց բաղկացած 3 թիմ:<br>Ուսանողներին տրվեցին տնտեսագիտական տերմիններով աղյուսակներ ու խաչբառեր:<br>Աղյուսակների մեջ նրանք պետք է գտնեին տնտեսագիտական բնագավառի՝ խառը տեղաբաշխված բառերը («Թաքնված բառեր») և պատասխանեին մասնագիտական հարցերին («Խաչբառ»):<br>Հաղթող թիմը ստացավ պատվոգիր: |
| **18.** | Հանրամատ-չելի զեկուցում | «Հայերը համաշխարհային կերպարվեստում»<br>***ՈՒԽ հետ համատեղ*** | 28.03 | Միջոցառմանը ներկա էին Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանը, դասախոսներ, տարբեր ֆակուլտետների 20 ուսանողներ:<br>Ուսանողներրը հայերենով և ռուսերենով ներկայացրին հայ մեծանուն նկարիչների կյանքն ու գործունեությունը:<br>Անցկացվեց վիկտորինա, որի հաղթողը պարգևատրվեց հուշանվերով: |
| **19.** | Հուշ-ցերեկույթ | «Վերհիշելով ապրիլյան պատերազմը»<br>***ՈՒԽ հետ համատեղ*** | 05.04 | Ներկա էին Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Ա.Մարգարյանը, տարբեր ֆակուլտետների 25 ուսանողներ:<br>Ուսանողները հանդես եկան Ապրիլյան պատերազմի մասին տեղեկատվությամբ, ելույթներն ուղեկցվեցին տեսանյութերով, որոնցում ներկայացվեցին մարտական գործողությունների վերաբերյալ մանրամասներ:<br>Ցուցադրվեց Ապրիլյան պատերազմի ժամանակ անմահացած քաջերի մասին տեսանյութ:<br>Վերջում ցուցադրվեց «Կյանք ու կռիվ 2» գեղարվեստական ֆիլմը: |
| **20.** | Ցուցահան-դես | «Մայրություն և գեղեցկություն» խորագրով ցուցադրություն | 07.04 | Տեղի ունեցավ<br>Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների մոտ 40 աշխատանքների ցուցահանդես:<br>Ներկա էին մասնաճյուղի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, շուրջ 100 ուսանողներ, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հյուրեր, արվեստի սիրահարներ: |
| **21.** | Կինոդիտում | «Ակսել Բակունց» փաստավավերագրական ֆիլմ | 12.04 | Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 10 ուսանողներ դիտեցին Ակսել Բակունցի մասին ֆիլմը, տեղի ունեցավ քննարկում: Ֆիլմի վերջում անցկացվեց նաև քննարկում Ա.Բակունցի ստեղծագործությունների վերաբերյալ: |
| **22.** | Գիտահանրա-մատչելի զեկուցում | «Լեգենդների դերն ու նշանակությունը զբոսաշրջության զարգացման գործում» Զեկուցող՝ Տիգրան Ղուշչյան | 16.04 | Ներկա էին Տնտեսագիտության ֆակուլտետի <<Սերվիս>> մասնագիտության 10 ուսանողներ: Զեկուցման մեջ ներկայացվել են զբոսաշրջային լեգենդավորման փուլերը, նպատակները, ձևերը և մի քանի հաջողված օրինակներ՝ համաշխարհային փորձից: |
| **23.** | Սեմինար | «Բանավեճի արվեստ» Սեմինարավար՝ Հրանտ Ղարագյոզյան ***ՈՒԽ հետ համատեղ*** | 18.04 | Ներկա էին Տնտեսագիտության ֆակուլտետի 10 ուսանողներ: Ներկայացվեցին բանավեճ վարելու հմտությունները, ինչպես նաև Քոլին Ֆլինի կողմից մշակված սխեման, որը թույլ է տալիս արդյունավետ օգտագործել կառուցողական ելույթի 7 բոպեները: |
| **24.** | Էքսկուրսիա | Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների այցելություն ք.Դիլիջան | 20.04 | Կիրառական արվեստի ֆակուլտետի 20 ուսանողներ այցելեցին Դիլիջանի պատկերասրահ, ուսումնասիրեցին հայ և օտարազգի նկարիչների՝ տարբեր ժամանակաշրջանները ներկայացնող գեղարվեստական գործեր, այնուհետև այցելեցին Երկրագիտական թանգարան, որտեղ ուսումնասիրեցին կավե սափորներ և կանացի ձեռագործ ժանյակներ, Դիլիջանի տարածաշրջանում կատարված պեղումներից հայտնաբերված ցուցանմուշներ: |
| **25.** | Մասնակ-ցություն գիտաժողովի | «1918թ. Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության արարման գործընթացը» խորագրով հանրապետական գիտաժողով | 12.05 | ԵՊՀ ԻՄ 8 ուսանողներ, այդ թվում ՈՒԳԸ 5 անդամներ գիտական զեկուցումներ են ներկայացրել մասնաճյուղում կայացած հանրապետական գիտաժողովում: |
| **26.** | Էքսկուրսիա | Ճանաչողական էքսկուրսիա ք.Երևանի թանգարաններ | 18.05 | ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 22 անդամներ մասնակցեցին Թանգարանների միջազգային օրվա միջոցառումներին՝ այցելելով Գաֆեսճյան արվեստի կենտրոն, Ռուսական արվեստի թանգարան, Հայաստանի պատմության թանգարան և Ազգային պատկերասրահ: |
| **Պլանավորված միջոցառումներ** | | | | |
| **27.** | Սեմինար-քննարկում | Ականավոր մանկավարժ-հոգեբանների տեսությունները | 21.04-26.04 | Նախատեսվում է, որ ներկա կլինեն Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 20 ուսանողներ: Կներկայացվեն ականավոր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Բանախոս՝ բ.գ.թ. Ա.Սարհատյան | | մանկավարժների և հոգեբանների տեսությունները՝ գեղարվեստական ընդմիջումներով: |

Մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահ՝ Հ.Ղարագյոզյան

քարտուղար՝ Ս.Շահնազարյան